



# ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՆԱԲԱԹ 5 ՅՈՒՆՎ. 1907. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

Պատասխանատու և պատասխանատու Խմբագիր

«ԱԶԱՏ ԽՕՄՔ»

Ազգօգուտ և ինքնազնաս շարաթաթերթին

Որ Աստ և Ամենուրեք

Ծնորհակա՛լ եմ:

Երբեմնի «Ազատ Բեմ»ին մէջ, երբ անիկա չէր մուսյլ գառազեղը ուրկէ կը լսուէին երկօրին առիւթներու (Լիօն Լիօն) ազգասիրական մանչիւնները, այլ ամառնային զուարթ թատրոնը Երօտի, Մէն Կէնի, Ե. Մ. Կիւրօտի կատակախաղներուն, զիս հանդիսաւորապէս «Կեփաս» անուանելէ ետքը՝ «Իշխանավայել առատութեամբ» աշխատակցութեանս ի վարձատրութիւն, այժմ զիս ծուլութեան հերոս մը ներկայացնել արգօյ հասարակութեան, զիս Կեփասէ ընելով հա-

պարակաւ, չէ՛ շիտակը ասիկա չէի սպասեր այնպիսի մէկէ մը որուն անուան գլուխը, մտտուոր անցեալի մը մէջ, իմ անուանս գլուխին տաքը կը կազմէր, բոլորովին գրականօրէն խօսելով...»

Գիտէի ո՛ր գրականութիւնը ապերախտ ասպարէզ մըն է. բայց չէի գիտէր որ գրապէտները ապերախտ մարդեր էին. թէև իր սւ է որ, վերջ ի վերջոյ, ասպարէզը կ'ազդէ մարդուն վերայ»

Երբեք միաքէս չէի կրնար անցունել թէ քու համբաւաւոր հեգնութիւնդ, որ ինձի այնքան մարդոց և իրերու վրայ խնդալ տուած է, որ մըն ալ պիտի դարձնես ինձի դէմ, որ այնքան նեղ ժամերու մէջ, աջ թևդ եղած եմ և երբեմն ալ ամբողջ կէսդ»

Թէ մեր մէջ գժտութիւն մը ծագած է կամ ոչ, ասիկա մեր գիտնալիք բանն է և հասարակութիւնը, ընթերցող կամ հեղող, ո՛ր և է իրաւասութիւն չունի քիթը մէջը խօթելու։ Թէ պէտք զգացեր ես այդպիսի տարաձայնութիւն մը հերքել, ասոր ալ ըսելիք չունիմ, որովհետև հարկաւ լուրջ պատճառ մը ունիս ատոր համար. բայց ի՞նչ հարկ, այդ առիթէն օգուտ քաղելով, իմին կարծեցեալ «մահացու» մէկ մեղքս հրապարակել և զիս անկարող ցուցունել երկտող հերքմնագիր մը շաբաթէ մը աւարտելու, իբրև թէ «Միքէի Սիրարկած»ը ըլլար գրելիքս...»

Բայց ի՞նչ հարկ երկար բարակ բացատրութեանց: Գուն ամէնէն լաւ գիտես այն ԲՅՅԻՆ պատճառը որուն համար ատենէ մը ի վեր ստիպուած եմ գազարեցնել աշխատակցութիւնս «Ազատ Խօսք»ի: Այդ պատճառը թէև անձնական բայց թեթեւ իմն ընդհանուր, կրնայ տեւական հանգամանք մը սաանալ միշտ պահելով իր առժամեայ երևոյթը, որ բոլոր երևոյթներուն պէս խարուսիկ է:

Անգունէ՛, այս նամակին հետ, հին օրերէն ձնացած սիրալիր բարեւներս:

ՊՈՆԴ

### ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ, ՄԸ

Շատ յարմար կողքայ պարոն Պոնդի բաց նամակին իբրև պատասխան Պաւլոսի Առաքելոյն առ Հռովմայեցիս թղթոյն այն խօսքը թէ՛ «Լասրն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ո՛վ մարդ, որ դատիւդ, զի որով դատիս զընկերն զանձն քո դատապարտես, զի դու զնոյն դործիս որով դատիսն»:

Բայց ձգենք առաքեալը Դամասկոսի ճամբուն վրայ և զառնանք մեր պարոն Պոնդին:

Անշուշտ կը սպասէինք որ պարոն Պոնդ իր ծուլութեան, այո՛ իր ծուլութեան, մասին մեր ըրած ակնարկութեան փորձուէր պատասխանե-

լու զինքը չքմեղացնելու անհրաժեշտութենէ՛:  
" արուած, բայց կը սպասէինք որ այդ պատաս-  
խանը ըլլար անկեղծ, յստակ, բացայայտ, անվե-  
րապահ և վերջնական:

Ի թէ անցելոյն Կեփաւը այսօր ինքզինք «Կե-  
փասէ» եղած կը զգայ, ինչպէս ինք կը գրէ ըստ  
բառականին կասկածելի ու վիճելի սրամտու-  
թեամբ մը, յանցանքը մերը չէ:

«Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք, ընդգէմ  
դարձայ նորա, քանզի գոգ իբրև սողաեալ իմն  
էր», կ'ըսէ Պաւլոս առաքեալ առ Գաղատացիս  
Թղթոյն երկրորդ գլխին մէջ, գլուխ՝ որ այլապէս  
չահեկան է աստուածաբաններուն համար քան  
այն գլուխը որ կը բարձրանայ պարօն Պոնդի  
(Մէնկէն) երկու ուսերուն մէջանդ:

Թո՛ղ պարօն Պոնդ երկարօրէն որոճայ «քան-  
զի գոգ իբրև սողաեալ իմն էր»ին վրայ:

Թո՛ղ որոճայ նաև սա տողերուն վրայ. «Այլ  
իբրև անսի թէ ոչ ուղիղ գնայ ի ճշմարտութիւն,  
ասեմ ցԿեփաս առաջի ամենեջուն, եթէ դու որ  
Հրեայդ ես հեթանոսաբար և ոչ հրէաբար կեաս,  
զիա՞րդ ստիպես հեթանոսաց լինել հրեարէն:»


Կ'ընդունինք թէ նեղ օրերուն մեր աջ բա-  
զուկը եղած է պարօն Պոնդ, բայց միթէ հա՞րկ  
է ասոր համար Փրկիչի հովեր առնել: Ու յետոյ,  
աւելի վայելուչ չէ՞ր որ մենք տայինք այդ վկա-  
յութիւնը: «Որ բարձրացուցէ զանձն իւր՝ խո-

նարհեսցի եւ որ խոնարհեցուցանէ զանձն իւր  
բարձրացցի», կ'ըսէ Դաւիթ Մարգարէն առ Ս.  
Գրիգոր Լուսաւորիչ սեղիւմ մէկ նամակին մէջ:

Մենք չենք ուզեր վեր առնել այն քօղը ու-  
րուն տակ ծածկուած է պարոն Պոնգի Ազատ  
Խօսքի աշխատակցութեան ժամանակէ մը ի վեր  
դադարումին պատճառները: Մուլութիւն անու-  
նը տուինք այդ իրողութեան, մեղմագոյն բացա-  
տրութիւնը տալու համար:

Պարոն Պոնգ կը սրտմտի ասոր համար եւ  
թաքուն կերպով մը կը սպառնայ յայտնութիւն-  
ներ ընելու: Որչա՛փ ճիշտ է Սաղմոսեբգուին  
խօսքը. «Նախ յիմարացուցանէ՛ ապա կորու-  
տանէ:»

Խօսքը ձերն է պարոն Պոնգ:



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՍ ՔԱՀՈՒԱԾ ԷՁ ՄԸ



ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ



(Շար. 32րդ թիւէն)

Այո, Պետրոսեան արտիստ մ'էր, բայց փորձառու-  
թիւններու բովէն անցած, երազներու երկնքէն վերա-  
զարձած արտիստ մը, որուն՝ կեանքի հանգամանքները

ստիպած էին նայել աշխարհի վրայ իր իրական պատկերին մէջէն:

Քոնի՛ քանի անգամներ առիթ եմ ունեցած տեսնելու իր մէջ գործի մարդը, քանի՛ քանի անգամներ յայտնած եմ իմ վրդովմանքը իր այդ *terre à terre*, «սրբողարկական» հայեցակետերուն համար. ահ՛ զզուանքի ի՛նչ խորին զգացումներ ունենած իմ ամէն անգամ երբ նկատել եմ Պետրոսեանին, ներկայացուած սկսելուց առաջ վարագոյրի ծակից սրահը զիտելիս, տեսնելու համար թէ որքան էր մուտքը:

Ա՛հ այո՛, ես վրդովուիլ եմ քո դէմ, ես նախատել եմ քեզ, Պետրոսեան. բայց այսօր, օ՛ այսօր ինչպէ՛ս հասկանում եմ քեզ, ընկեր իմ, ինչպէ՛ս ներում եմ քո այդ փոքրիկ մեղքը, որ իմ աչքիս ահաւոր, քեզ համար ոչ այլ ինչ էր այլ բնական մտատանջութիւն մը ընտանիքիդ, զաւակներուդ ազահովութեան մասին:

Որովհետև դու ընտանիք մը, զաւակներ ունէիր, որոնց, ինչպէս ուրիշ շատ մը հայ գործիչներունը, քո մահէզ վերջը վիճակուած էր հասարակութեան մոռացկոտ անտարբերութիւնը, այն հասարակութեան՝ որ մարդու յուզումներու այնքան հեշտագին բուսէնէր կը պարտէր քեզ աղքատութիւնը, անօթութիւնը, դուցէ և արհամարհանքը օթեակների մէջ նստած տիկիկներու, բրոնց աղամանդաչազ լանջերու յուզումնալից ելիէջները, այդ սղամանջներու փայլին բուսէական շացուած միայն տուած էին քեզ...

\* \* \*

Ահա այդ ապագայի հեռապատկերն էր որ ներշնջում էր քեզ այդ մտատանջութիւնը, և զոր ես զատապարտում էի իբր մահացու մեղք, իբր նախատինք մը

արտիստի կոչումին:

Բայց թող չի խոզի քո յաւիտենական խաղաղ նիրհը, սիրելի Պետրոսեան, քո ընտանիքը, քո երեխաները ապահովում են. ԴԱՐԸ ՓՈՒՍՈՒԱԾ է. ազգը արթնունում է իր խոր թմրութենէն, տանջանքներու ուրսումնովը ցնցուած: Նա արդէն զգում է իր պարտականութիւնները դէպի իր զործիչները, և քանի որ չէ կարողացած իրեն, այդ անձնուէր գործիչին հատուցանել իր երախտադատական պարտքը, դէթ ուզում է նա պարտահատուց լինել յանձին նրա թողած սիրելիներու:

Եւ մենք մնացեալ հայ զերասաններս, որքան որ էլ անմխիթար ենք, քեզ կորսնցնելով, սիրելի ընկեր, որքան որ էլ շշկլանած ենք այն ահաւոր պարապին առաջ, զոր բացած է մեր խմբին մէջ քո անդարձ մեկնումը, և զոր տարիներով գուցէ կարելի չլինի լեցնել, այսօր երախտապարտ ենք քո յիշատակին. որովհետեւ քո շնորհիւ է որ անհետացում է մեզ մի ահաւոր քօյմար հայ զերասանի ապագայ անապահովութեան քօյմարը:

Նրան մնումէ այսուհետեւ ունենալ միակ մտածում մը. «աշխատանք ու արժանիք զնահատել գիտցող ազգի մը արժանաւոր աշխատաւորը լինելի»

ԱՐՄԷՆԵԱՆ

---

ԱՐՄԷՆԵԱՆ ՆԵՐԿԱՅՍՏՈՒՄԸ

---

Տէր և Տիկին Արմէնեան գեղեցիկ surprise մը խոստացած էին, զոր հրամցուցին մեզի անցեալ կիրակի կէս օրէն յետոյ Էզպէքիէի թատրոնին մէջ:

Պիտի համարձակիմ ըսել, առաջին անգամն է որ հայ բեմը Գահիրէ՝ լոկ ժամանց մը կամ զարմացական յափշտակութեան առարկայ ըլլալէ գաղբելով, նախաքարը գրաւ բարքերու ուսումնասիրութեան դպրոցի մը, որ անողոք ձեռքով մը այնքան մտէն մատնանիշ կընէր ներքինը ընտանեկան կեանքի մը «Հիւրը» խաղին մէջ:

Ասոր համար է ու գերակատարներուն ազգեցութիւնը խորին և տիրական եղաւ հանդիսատեսներուն վրայ:

Պ, Արմէնեան՝ իր ամուսնի գերին մէջ ամէն քննադատութենէ վեր էր: Չունէր շարժում մը կամ միմիջ մը որ իր արտասանած իւրաքանչիւր բառին վրայ չափուած ու անկէ ազգուած չըլլար:

Geste երուն ամենէն գրաւիչը և գերազանցօրէն բնականը եղաւ իր լացը, որ պահ մը ներկաներուն կարծել տուաւ թէ իրականութեան մը առջև կը գտնուէին, և թերևս այդ տպաւորութիւնը շարունակէր տևել... եթէ վարագոյրը խաղին վերջացած ըլլալը չգուժէր:

Տիկ. Գուրեան-Արմենեան պատկերացուց թիւրը սիրազեղ մօր մը կրկնակ հանգամանքով: Շընորհաւորելիօրէն գեղեցիկ ու յստակ իր արտասանութիւնը ամէն գովեստի արժանի էր: Ըմբոստացման մը միջոցին իր խրոխտ ու սեգ շարժումները կը մատնէին ձիւքը զօր ունէր բեմին համար: Երիտասարդական ինքնամոռացումի մէկ

վայրկեանն վերյուշումը, երբ ամուսինը զայն իր  
երեսին կուտար, պէտք էր տեսնել իր դիմագը-  
ծութիւնը, որուն վրայ կը կարգացնէր անմեղու-  
թեան և զղումի ընդիմամարտ պայքաւը:

Պ. Օ. Չայեան, ոչ կը ներկայացնէր ԱՊՐԱՆԻ  
սիրահար մը, յաջողեցաւ Շատ լաւ գիտցաւ ար-  
տայայտել միմիքը և շարժումները զոր իր տար-  
փոտ մարդու թիբը կը պահանջէր: Մեր անկեղծ  
շնորհաւորանքը մեր բարեկամ «Փրանքօ-Թրքա-  
կան» ի Վահրէի անզուգական Արթին աղային  
որ այսքան դժուարին գեր մը կրցաւ իր բարձ-  
րութեանը մէջ պահել:

Բառ չեմ գտներ բացատրելու այն խանդա-  
վառ ընդունելութիւնը զոր գտան Դուրեանի  
«Տրտունջը» Պէշիկթաշլեանի «Ներայր Ենք մենք»  
և Ալիշանի «Բամբ որտտան» բանաստեղծութիւն  
ները, արտասանուած Պ. Արմէնեանէ

Յերեկոյթը վերջացաւ «համբոյրը» անուն  
fécérie ով մը (Թարգ. Պ. Արմենեանի) զոր շատ  
յաջողապէս ներկայացուցին Տէր և Տիկին Արմեն-  
եան իրենց արուեստագէտի բնական տաղան-  
դով: Միայն թող ներուի ինձ գիտել տալ թէ  
բարձր թուիչքը այդ կտորին դժուարահասկնալի  
էր մեր ժողովուրդէն, որ աւելի հետամուտ է  
գէպքերով լեցուն խաղի մը:

Փափաքելի է որ Պ. Արմենեան ներկայա-

ցումներու շարք մը տար մեզի և հաւասարի եւ թէ Գահիրէի հայ հասարակութիւնը պիտի ունենայ փութկոտութիւնը բաջալերելու արուեստագէտ մը, զոր ամէն ատեն չի կրնար վայելել:

Գահիրէ, 31 Դեկտ. 06

Կ. Փ.

ԳԵՐՍՇԵՆՈՐՀ (1)

Տ. 6 կրտիչ Վրդ. Ազաւնունի բարեջան Առաջնորդ Եգիպտոսի

ի Գահիրէ

Գերազատիւ հայր Սուրբ,

Ներկայիւս կուգամ, որդիական խոնարհութեամբ ձեր հայրական ուշադրութիւնը հրաւիրել հետագոյ ազերսանացս մասին:

Անդորրելու համար ձեր Գերազատուութիւնը, ըսեմ՝ անմիջապէս որ խնդիրը Սահմանադրութեան, Ալեքսանդրիոյ թաղական խորհրդին, Պօզոսեան վարժարանին, Գալստեան վարժարանին կամ ուրիշ այս կարգի ձեզ փորհարութիւն պատճառող հարցի մը մասին չէ:

Նոյնպէս չեմ գար ամուսնալուծութեան խնդրագիր մը մատուցանել ձեզ, կնոջս անբարոյշա-

(1) Ասիկա պատճէնն է այն յանձնարարական նամակին զոր շաբաթ առաւօտ, յունվար 5, չրկեցինք մեր սիրեցեալ Առաջնորդին: Ծ. Խ.

կան ընթացքը պարզելով, ոչ թէ կնոջս հաւատարմութեան վրայ կոյր հաւատ մը ունենալու և կամ անոր անբարոյական ընթացքը անամօթաբար շահագործելու համար, այլ սրովհետև մինչև նամակս թղթատան յանձնած պահուս կոյս և ամուրի եմ ձերդ գերաշնորհ հայր Սրբութեան չափ:

Խնդիրը որուն համար գիմուժ կ'ընեմ ձեր Գերապատուութեան՝ գիւրին է և այնքան յոգնութիւն պիտի պատճառէ ձեզ որքան գաւաթ մը մաքրողական խմելը:

Նամակիս հետ ներփակ պիտի գտնէք ցանկ մը, այլազան ու զարմանազան ցանկ մը, ուր խառըն ի խուռն կը տեսնուին Փահիրէաբնակ կարգ մը մեր պատուարժան օզգայնոց անուններն ու մականունները, իրենց հասցէներով: Հոն պիտի տեսնէք մեծահարուստ բարերար ջոջը օրը օրին ապրող բախտախնդրին քով, պարկեշտ արհեստաւորը դորձունեայ վաճառականին հետ, հողատէրն ու կալուածատէրը, կառավարական պաշտօնեան և Առաջնորդարանի բազմամեայ աշխատաւորները, ամէնքն ալ հայաստանեայց էկեզեցւոյ զաւակներ, պատուական ընտանիքի հայրեր, առաքինի մուսխիններ, հօրամոյն սրբիներ, սրտք միակ թերութիւն մը ունին, այն է՝ իրենց բաժանորդագրէնը չվճարել:

Արդ, Գերապատիւ հայր Սուրբ, այժմ խո-

Նարհաբար կուգամ խնդրել ձեռնէ որ հաճիք այդ մտորեալ ոչխարները հրաւիրել Առաջնորդարանի փարախը և ձեր հայրական յորդորներով զիրենք համոզել պարտքերնին վճարելու առ Ազատ Խօսք:

Յիշեցուցէք այդ պատուարժան ազգայիններուն ինչ որ պատահեցաւ այր ոմն Անանիայի հանգերձ կ'ուս իւրով Սափիրաւ:(1) Ըսէք թէ ինչպէս այդ ամուլը որ իր կոկորդը անցուցած էր Բառնաբաս Առաքեալի հրատարակած «Վերնատուն» շաբաթաթերթի բաժնեգինը, Ս. Պետրոսի գիտողութեան վրայ, յանկարծամահ եղաւ:

Խօսեցէք, խրատեցէք, քարոզեցէք, հայր Սուրբ, տեսէք այս գործը. ձեր անգրանիկ գործը եգիպտոսի մէջ և թող ձեր թշնամիները պապանձին, տեսնելով որ կարող էք բան մը ընելու եթէ կամք ընէք:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ, մնամհոգեկցորդ որդի ձեր Արժանապատուութեան:

Ե. Օտեան

Յ. Գ. Հարկ չիկայ ըսելու որ գանձումներուն վրայ 100 ին տասը քօմէսիօն մը պատրաստ ենք վճարելու ձեզ:

Նոյն

---

(1) Գործք Առաքելոց, գլ. Ե:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ ՄԵՍ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՎ ԲԵՂՈՒՆ

Կազմանքի գեղեցիկ նուէր մը մեր Սահմանադրականներուն: Յունվար 15ին, այսինքն՝ հին տոմար յունվար մէկին՝ Եգիպտոս կը հասնի Վրասիմ Պօզոս փաշա նուպար: Այս անգամ լուրը աշենաստոյգ աղբիւր բխած է և արդէն ծանուցուած անգոյս օտար թերթերուն և Լուսաբերի մէջ:

Գեր. Մկրտիչ վրդ. Աղանունի երկուշաբթի օր պիտի հասնի Ալեքսանդրիա Ս. Պօզոս Պետրոսի տօնին առթիւ: Նորին Գերապատուութիւնը քանի մը օր պիտի մնայ հոս հոգեւորապէս մխիթարելու համար Ալեքսանդրիայ հօտին ոչխարները:

Կը լսենք թէ Բ. Չ. Ը. Հ. Միութեան Գահիրէի մասնաճիւղը կը պատրաստուի եղեր գատ բանալ Ազատ Խօսքի դէմ: Միութիւնը կրնայ վստահ ըլլալ որ ատիկա բնաւ չպիտի արգելէ մեզ իրեն դէմ մեր պայքարը առաջ մղելու նոյն ուժգնութեամբ:

Ստացանք Եգիպտոսի կառավարական թղթատտան միջնորդութեամբ, Գահիրէ լոյս տեսած վիպակ մը «Հիւլէ» խորագրով: Սոյն երկը յատկապէս պատրաստած է Ժողովուրդ ամսաթերթի խմբագիր Տ. Ա. Պալեան և կը կազմէ Ժողովուրդին Մատենադարանը չարքին 2րդ թիւը:

ԿԱՐՈՒՐ ԽԱԶ

Մեզ կը հաղորդեն թէ Գահիրէի հայ Յեզ. Գաշնակցու թեան Կարմիր Խաչի Հայուհեաց Միութիւնը գեկտեմբեր 16 ին նիստ գումարելով իր Գործագիր ժողովը ամբողջովին կազմած է:

Այս առթիւ Միութիւնը կը ծանուցանէ թէ Տիկին Աշրգեանի առաջարկութեամբ նախկին ընդհանուր ժողովին մէջ բացուած հանգանակութեան գումարը 1105 զրուշ ողջ, յանձնուած է Տիկին Գանձապետին:

Ուրախալի է տեսնել որ Եգիպտոսի հայուհիները, անտարբեր չեն իրենց տառապող եղբայրներու շարչարանքներուն մասին և ձեռքերնէն եկած ջանքերը չեն խնայել մեղմելու համար թուրքիոյ բանտերուն մէջ տուայտոյ անմեղ հայերուն տառապանքները:

Կը շնորհաւորենք Կարմիր Խաչի Միութեան ազնուասիրտ տիկիները և օրիորդները:

ՓԱՍՏԱՐԱՆ

Մ . Թ է Ո Յ Ի Լ Ե Ա Ն

Կը ստանձնէ ամէն տեսակ դատեր, Խառն Գատարաններու առջև. նմանապէս կը խմբագրէ ամէն պայմանագրութիւններ և այլ դատական պաշտօնագրեր:

Գրասենեակը կը գտնուի Մէնչիէի հրատարակին վրայ, Մօնֆէրաթօյի շէնքին մէջ:

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

Երիտասարդ մը պատրաստ է ֆրանսերէնի, հայերէնի, անգլիերէնի, տուարակարութ'ան եւ մաթէմաթիկի մասնաւոր դասեր տալ, ինչպէս նաեւ այցելու գրագրի պաշտօն ստանձնել շատ գոհացուցիչ պայմաններով: Դիմել Ազատ Խօսքի խմբագրատանը:

#### Ա. 2 7

Աթթարին փողոցը թիւ 39 խանութին մէջ կը վաճառուին հեռեեայ ապրանքները, ամենալընտիր տեսակէն եւ գոհացուցիչ գիներով:

Ղէյթին եազ, սապոն, ճերմակ պանիր, կովկասի հոշակաւոր սև խավեարը ինչպէս նաեւ կովկասեան եւ հայկական իշխան եւ Շամալի ձուկերը, նոյնպէս Եէմէնի խահուէ եւ այլ նպարիչէնք:

ԱՆՆ ԱԶԻԱՍԱՆՈՅ  
ՌՈՒԳՐԱՆ ԵՒ ՏՈՒԳՐԱՆ ԱՄՍՏՈՒՅԵԱՆ  
Գ. ՆԱՂԻԻԻՆՆ  
«Ուսմէ եւ Կարեւոր» Կարգաւոր Եւ ՏԵՒ  
1898 ՍՏՏ  
15 RUE STAMBOUL IS  
ALEXANDRIE

Այս աշխատանքը ըզրոյն կը պատրաստեն Գրողներ եւ Կրթիկ Գրողները: Քառասն. Այլնէլ. Պարզապէս Կրթիկներ, արեւել եւ արեւմտեաններ, ժամերէն եւ. Քիմիկներով եւ Կովկասեաններով փոքրեցեալ գործեր:

Տարբարակեալ ամեն տեսակ գործեր նաեւ ստորագրութիւն, Հարստեանց Կարգաւորներ, այլապարտներ, Նախկիններ, ստորագրութիւն. Նոյն տարածք, Նախկիններ, նախկին արտիքներ, գրքեր եւ: Մասնաւոր թմայի նախկին մարտական մասեր գրել:

Այս աշխատանքը վերապէս կը շնորհակալուին Ազգայնորդի, Գահիրէի եւ բոլոր հիշատակող պարզապէս, խառնակեցեալ թէ նաեւ կարգաւոր խմբագրութիւնները ամենամեծ իմաստով կը կատարուին եւ գտն կը անեն ամեն զմարտական մասերը:


Ստոր գործատուներու դիմել ասոյ հանելոյք անյամ հը այլեղի այլ աշխատանքը:

«ԱՂԱՏ ԽՕՄԻ» ՁԵՌՆԻ  
ԿԸ ՎԱՃԱՌՈՒՐԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ.  
Ղազիկեանի քով եւ Շէրիֆ  
Փաշա լրագրավաճառ Տ.  
Թեյլալեանի խանութը:

Գահիրէ՝ լրագրավաճառ  
Տ. Հունկի եւ Կոլտըն Բէօզ-  
քի քով եւ «Լուսարի»  
թերթի գրուիչին մօտ:

Նախորդ շարթուն  
թիւերը կը վաճառուին  
կրկին գինով:



“ԱՋՏՆ ԽՕՒՔ”-ի Պայմանները

“ԱՋՏՆ ԽՕՒՔ”-ԿԸ ՉՐԱՏԱՐԳՎՈՒՄ ԵՄԲՈՒ ՕՐԵՐԸ

Եղիպտոսի համար բաժնեկիցներէ

40 ԲՈՒՆ 40 ՉՐԵ ԱՂՁ

20 “ 20 “ “

Ա.Ր.Տ.Ա.Ս.Ա.Ն.Դ.Ա.Ն.

ԵՄԲՈՒ 40 ԲՈՒՆ 10 ՏՐՈՒՔ

ԲՈՒՆ “ “ 4 ԲՈՒՄԼԵ

ԱՍԵՐԻՎԱ “ “ 2 ՏՈՒՍ

Բաժնետիրացւորները կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԸ - 111,2

“ԱՋՏՆ ԽՕՒՔ”-ի համար բաժնեկիցին կամ  
որ և է դրամիւն պէտք է ապրիլ Տե-  
տեմբեր հասցէին

**Կ. Nazarethian**

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE)

Եւանդոսներ կընդարձակեմ խանութ  
արքայականութիւնով.

Գրաստանատու խմբագիր է ԱՏԵՃԵ

Տպ. Փարզ Է ԿԱԶԱՐԻՄԻԱՆ Ալեքսան.